

**ՀՈԴԱԿԱՊՈՎ ԵՎ ԱՆՀՈԴԱԿԱՊ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ս. Ա. ԷՆՑԱՆ

Ռառաբարդության մեջ հոգակապը հիմնական ձևությոնները բաղադրող ձևական ստորր է, որով բաղադրվում է իսկական բարդությունների մեծագույն մասը:

Հոգակապը իմաստային մասնակցություն չունի բարդության ընդհանուր ռառային իմաստի մեջ. բացի դրանից, նրանով չի պայմանավորվում նաև բաղադրվող հիմնական ձևությոնների հերթականությունը, ընդհանրապես, հոգակապն ինքն է կախման մեջ բաղադրվող հիմնական ձևությոններից (ի վերջնահնչյուն ունեցող բառերից հետո հնչյունափոխվում է, իսկ ձայնավորով սկսվող բաղադրիչներից առաջ դուքս է ընկնում. հմմտ. որդեգիր, լուսարձակ և այլն): Հայ լեզվաբանության մեջ հոգակապը համարվել է երկրորդական ձևվությոն¹:

Սակայն սխալ է հոգակապը ձևությոն համարելը, քանի որ այն ըստ էության իմաստազուրկ միավոր է, թեև ունի ձև և կատարում է լեզվական որոշակի դեր:

Նորագույն լեզվաբանության մեջ ձևությոնի սահմանման և ճշգրտման հետ կապված, վերանայվում է նաև հոգակապը ձևությոնային միավոր համարելու տեսակետը: Այսպես՝ է. Աղայանը իր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ հոգակապը և առհասարակ իմաստակիր միավորները միացնող, կապող հնչյունները համարում է ներություններ:

Հոգակապը գործառություն ունի բառային մակարդակում, քանի որ մասնակցում է բարդ բառերի բաղադրմանն ու ձևավորմանը և ունի ձևակազմական արժեք: Այս տեսակետից էլ հոգակապը որոշակի դեր է կատարում իսկական բարդությունների մեծագույն մասի ճանաչման գործում:

Ըստ բաղադրիչների միացման ձևի, իսկական բարդությունները լինում են հոգակապով և անհոգակապ: Հոգակապի առկայությունը իսկական բարդությունների մեջ պայմանավորված է լեզվական ավանդությամբ: Այդպիսի ավանդություն ունեն նաև հնդեվրոպական այլ լեզուներ, ինչպես՝ հունարենը, ռուսերենը (орѣнакъ, светофор, орденоносец, солеварня) և այլն:

Հայերենի հոգակապը հիմնականում ա-ն է (ակնաբույժ, մեծամիտ, կարմրաամորթ, հերոսամարտ, գրախանութ և այլն): Սակայն ժամանակակից հայերենի մի շարք բարդություններում գործառություն ունի նաև ե հոգակապը: Հայտնի է, որ ե հոգակապը առաջացել է հայերենի -ի արմատական վերջնահնչյունի և ա հոգակապի միացումից (ի+ա>յա>ե). այսպես՝ այգեձոր

¹ է. Ռ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1949, 1952: Նույնի «Բանականության կառուցվածքը ժամանակակից հայերենում» («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 247):

(այգի + ա + ձոր), այգեկուր (այգի + ա + կուր), այգետունկ (այգի + ա + տունկ), այգեքաց, այգեֆաղ, ալեքախ (ալի + ա + բախ), ալեծուփ, ալեհեր, բարեխիղճ (բարի — ա + խիղճ) և այլն:

Ա հոդակապը հանդես է գալիս նաև մի քանի հոլովաձևերով (հատկապես հին հայերենի սեռական և գործիական, ինչպես նաև հոգնակի հայցալան) և հիմնական ձևովներով բաղադրված իսկական բարդություններում. ինչպես՝ աշնանամուտ, գարնանամուտ, աշնանավերջ, աստեղագարդ, ձերբակալել, ձերբագատել, կենսաբեր, կենսաժպիտ, կենսաշող, կենսագիր, կենսախինդ, կենսաճատատ, հաճոյակատար, հաճոյախոս, բարյացակամ և այլն:

Այս երևույթը բնորոշ չէ իսկական բարդություններին, քանի որ, երբ բարդության առաջին անդամը հոլովաձև է, ապա բարդությունը բացելիս ձևաբանորեն արդեն դրսևորված կապակցություն է ստացվում, որ հատուկ է կցական բարդություններին (օրինակ. տանտեր, տանտիրուհի, մորեղբայր և այլն), Սակայն, որքան էլ այսպիսի բարդությունների մեջ առաջին բաղադրիչների ձևաբանական ցուցիչները պահպանված են (հմտ. գարնանամուտ — գարնան — ա — մուտ, աշնանամուտ, հորաքույր, մորաքույր) և այլն, այնուամենայնիվ, սրանք դիտվում են իբրև իսկական բարդություններ, քանի որ հոդակապը հեռացնում և, բնականաբար, ինչ որ — չափով թուլացնում ու մթագնում է բաղադրիչների շարահյուսական կապը:

Այս երևույթը կենսունակ է նաև բարբառներում. ինչպես՝ ձեռացագիր, ձեռացաթուր (հին հայերենի հոգնակի թվի սեռական հոլովաձևերով), արե՛նապարտ և այլն, որոնք գրական հայերենում գործածական չեն²:

Ժամանակակից հայերենում նկատվում են և հոդակապի հաճախադեպ կիրառման երևույթներ. այսպես, մի շարք բարդ բառերում ա հոդակապի վերջիններն դրվում է և. օրինակ՝ ծաղիկ, հաշիվ, բաժին բառերով բաղադրված մի քանի կազմություններում. ինչպես՝ ծաղկեպսակ, ծաղկեփունջ, հաշվեկշիռ, հաշվեհարդար, հաշվեկատ, բաժնետեր, բաժնետոմս: Այս բառերը պետք է օրինաչափորեն բաղադրվեն ա հոդակապով, ինչպես, հետևյալ բառերն են՝ ծաղկագարդ, ծաղկամարգ, ծաղկաֆաղ, ծաղկավաճառ, ծաղկավառ, ծաղկանկար, հաշվապահ և այլն (ա հոդակապով չի միանում միայն բաժին բառը):

Սրանցից ծաղկեպսակ և օրեկան բառերի և հոդակապը ժամանակակից հայ քերականագիտության մեջ բացատրվել է ղափնեպսակ և տարեկան բառերի նմանությամբ³:

Օրեկան բառը հավանաբար կազմվել է տարեկան բառի նմանակությամբ (այսպես է նաև ամսեկան բառը), սակայն օրեկան և ամսեկան բառերը գործածվում են առավելապես ժողովրդա-խոսակցական լեզվում, իսկ գրական լեզվում ունենք՝ օրական, ամսական:

Ինչ վերաբերում է ծաղկեպսակ բառին, ապա այն, թերևս, արդարանում է ղափնեպսակ բառին նմանվելու հանգամանքով, սակայն նմանակության օրենքը, որ առհասարակ գործուն և ամենազոր է բառակազմական կաղապարների մեջ, հոդակապի գործածության խնդրում յուրահատուկ բնույթ է կրում: Տվյալ դեպքում ծաղիկ, հաշիվ և բաժին բառերով բաղադրված բարդություններում և հոդակապի առկայությունը բացատրվում է ոչ թե ուղղակի և հոդա-

² Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 191:

³ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի զարնթաց, Երևան, 1955, էջ 155:

կապով բաղադրված կաղապարների նմանակութեամբ, այլ և հողակապով միացող բառերի ռառավարչի բաց վանկի ի ձայնավորի և ա հողակապի միացումից առաջացած (ի+ա>յա>ե) հնչյունափոխական օրենքի նմանակութեամբ կամ դուգորդութեամբ:

Այսպես՝ ծաղիկ. հաշիվ. բաժին բառերով բաղադրված ծաղկեպսակ. ծաղկելիունց, բաժնետեր, բաժնետոմս, հաշվենկատ, հաշվեհադար, հաշվեկշիռ բառերի առաջին բաղադրիչների վերջին փակ վանկերի ի ձայնավորը հանդիպելով ա հողակապին, զուգորդվում է բաց վանկում ի ձայնավոր ունեցող ե ա հողակապով բաղադրվող բառերի ի+ա>յա>ե հնչյունափոխության օրենքի հետ (հմտ. տարի+ա+մուտ>տարեմուտ, գինի+ա+մուլ>գինեմուլ), և վերածվում ե-ի. ինչպես՝ հաշիվ+ա+կշիռ>հաշվեկշիռ, բաժին+ա+տոմս>բաժնետոմս և այլն:

Այսպէս հողակապի գործածութիւնը այնպիսի կայուն լեզվական ավանդութիւն է, որ հազվադեպ է խախտվում սոսկ նմանակութեամբ: Ժամանակակից հայերենի հողակապի նորմայի խախտման երևույթները կապված են նաև լեզվական այլ դործոնների հետ: Այստեղ դեր են կատարում ոչ միայն հնչյունների միացման, հնչյունափոխական օրենքների նմանակութեան կամ զուգորդութեան, այլև առհասարակ հնչյունների փոխազդեցութեան, նրանց հնչյունափոխութեան և բարևհնչունութեան գործոնները:

Հանդիպում է նաև հակառակ երևույթը. երբ և հողակապի փոխարեն գործածվում է ա. այսպես՝ հայելապատ բառի մեջ օրինաչափ չէ ա հողակապի առկայութիւնը, բանի որ հայելի+ա+պատ բառը օրինաչափորեն պետք է լիներ հայելեպատ՝ ի+ա>յա>ե հնչյունափոխութեան օրենքով, սակայն այստեղ տեղի է ունեցել հնչյունական փոխազդեցութիւն. հայելապատ բառի վերջին բաղադրիչի (պատ) ա հնչյունը ազդել է ե հողակապի վրա և նմանցրել իրեն. աեղի է ունեցել ետրոնթաց լիակատար առնմանութեան հնչյունական փոխազդեցութեան երևույթ:

Հնչյունական փոխազդեցութեամբ է բացատրվում նաև արժեքուղթ բարդութեան ե հողակապը: Այստեղ ներգործել է արժեք, արժել, արժենալ, արժեցողութիւն բառերի ե հնչյունի ազդեցութիւնը ա հողակապի վրա, որի հետևանքով արժաքուղթ բարդութեան փոխարեն կազմվել և գործառութեան մեջ է մտել արժեքուղթ բարդութիւնը:

Ե հողակապով են բաղադրվում նաև այց բայարմատ ձևովթով կազմված այցեգին, այցեքուղթ, այցեվնար, այցեֆարտ բարդութիւնները: Սրանցում հավանաբար դեր է կատարել այցի գին, այցի քուղթ, այցի վնար, այցի տոմս, այցի ֆարտ կապակցութիւնների ի հոլովական վերջավորութեան ազդեցութիւնը ա հողակապի վրա, որը հանգեցրել է ի+ա>յա>ե հնչյունափոխութեանը (հմտ. այցի+ա+գին>այցեգին, այցի+ա+թուղթ>այցեթուղթ, այցի+ա+տոմս>այցետոմս և այլն:

Հողակապ չի դրվում այն իսկական բարդութիւններում, որոնցում հաջորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով. ինչպես՝ արագընթաց, բազմազգ, բայարմատ, բայիմաստ, գաղթաշխարհ, գլխուղեղ, գրանցում, գրառում, դասարնկեր, երգասաց, զբոսայգի, թանաքաման, ժամանց, լողավազան, լողափ, լուսաստղ, լուսարձակ և այլն:

Հողակապ չեն վերցնում նաև այն բարդութիւնները, որոնց երկրորդ բաղադրիչները սկսվում են ե-ով և ո-ով: Սրանք բառամիջում հնչվում են իբրև

է և օ ձայնավորներ և այս հիմունքով էլ բարդութեան մեջ դրանցով սկսվող արմատներէից կամ բառերից առաջ ևս հոգակապը դուրս է ընկնում. ինչպես՝ բազմեանգ, գունեանգ, երփեանգ, հնչեանգ, նրբեանգ, զարկեանկ, ժպտեան, լուսեան, ծիծաղեան, սեան, ձեռնեան, մեներգ, վերելակ, հալորդի, թռնորդի, փշորդի, լավորակ, բարորակ, չարորակ և այլն:

Այսպիսով, իսկական բարդութիւններում ձայնավորով սկսվող բաղադրիչներից առաջ հոգակապի կորուստը լեզվական կայուն օրինաչափութիւն է հայերենում և չի փոփոխվում որևէ գործոնի ազդեցությամբ, լինի դա հնչյունական փոխազդեցութիւն, նմանակութիւն, թե բարեհնչունութիւն:

Ինչ վերաբերում է ամենա-մասնիկով և ձայնավորով սկսվող ածականներով բաղադրված հոգակապով բարդութիւններին, ինչպես՝ ամենաամեն, ամենազգնիվ, ամենազղու, ամենանկեղծ, ամենաընտիր, ամենաուժեղ, ամենաուշիմ, ամենաօգտակար և այլն, ապա սրանցում ամենա-բաղադրիչը կամ դերանունը, ինչպես հայտնի է, կորցրել է իր բառային արժեքը և վերածվել ածականի գերադրական աստիճան կազմող նախածանցի. այստեղ ամենա-մասնիկը ամեն դերանվանական բաղադրիչով կազմված բարդութիւններից տարբերվում է թե՛ իմաստային (քերականական), թե՛ ձևային (պահպանում է հոգակապը ձայնավորով սկսվող հաջորդ բաղադրիչներից առաջ, հմմտ. ամենաարագ) կողմով:

Հոգակապի՝ ձայնավորով սկսվող բաղադրիչների հետ միանալու փաստեր են երևան գալիս օտար կամ փոխառյալ և հայերեն բաղադրիչներով կազմված բարդութիւններում, որոնք լեզվաբանութեան մեջ կոչվում են հիբրիդ բառեր: Ռադիո, կինո, ֆոտո, հիդրոտուրբին, հիդրոէներգիա, էներգասիստեմ, ռադիոպրեմիերա, ռադիոգալակտիկա, միկրոէլեկտրոնիկա, էլեկտրաէներգիա, կինոմեխանիկ, կինոդրամատուրգ, ֆոտոխրոնիկա, միկրոռեզիստ, միկրոավտոբուս, միկրոտուրնիր, միկրոսխեմա, միկրոէլեկտրոնիկա, տուրբոգեներատոր, տուրբոկոմպրեսոր և այլ փոխառյալ բառերից բառակազմութեան համակարգում գործառութիւն գտան էլեկտր, էներգ, հիդրո, տուրբո, ռադիո, կինո, միկրո բաղադրիչները: Էլեկտր և էներգ բաղադրիչները ա հոգակապով առավել մերկացին հայերենի բառաբարդութեանը, ինչպես՝ էլեկտրաապարանգ, էլեկտրագնացգ, էլեկտրագոյում, էլեկտրավառարան, էլեկտրաշարժիչ, էլեկտրաճաղդիչ, էլեկտրասարգ, էլեկտրաչափ, էլեկտրամեկենաշինություն, էլեկտրափարշ, էներգագինում, էներգամատակարարում, էներգատար, էներգանորոգում, էներգատեսություն, էներգաճգնություն, էներգասնուցում և այլն:

Էներգ և էլեկտր փոխառյալ բաղադրիչները հասարակական կյանքում ունեցած իրենց դերով և ա հոգակապ ստանալով առավել ճկունացան և մեծ թվով հայերեն բառերի հետ բաղադրվելու հնարավորութիւն ստացան, քան սուրբո, միկրո, հիդրո բաղադրիչները:

Սրանցից տարբերվում են ռադիո, ֆոտո, կինո բաղադրիչները, որոնք ևս խիստ կենսունակ են բառաբարդութեան բնագավառում, սակայն սրանք, նախ, իբրև առանձին բառեր ևս խիստ գործածական են, և հետո, կապված լինելով գիտութեան և տեխնիկայի առաջատար ճյուղերի հետ, ստեղծում են բազմաթիվ նոր բարդ բառեր ու տերմիններ: Էլեկտրա և էներգա բաղադրիչները թեև իրենց ձևով (հոգակապի գործածությամբ) և բարդութեան մեջ արտահայտած իմաստով ու հարաբերությամբ բավականաչափ տարբերվեցին հիդրո-

ւո. տուրբո և միկրո բաղադրիչներից և դրանով էլ մտան բուն իսկական բարդությունների շարքը, սակայն, լիակատար կերպով չմերվեցին հայերենի բառարարությանը՝ չենթարկվելով հայերեն բառաբարդության մեջ գործող այնպիսի էական օրինաչափության, ինչպիսին է ձայնավորով սկսվող հաջորդ բաղադրիչից առաջ հոգակապի կորուստը. այսպես՝ էլեկտրաապրանֆ, էլեկտրաադրուկ, էլեկտրաազդանշան, էլեկտրաաղաց, էլեկտրամաքաճիչ, էներգատղակ և այլն:

Այս երևույթը նկատվում է նաև փոխառյալ բաղադրիչներով բաղադրված այնպիսի բարդություններում, որոնցում վերջին բաղադրիչներն են փոխառյալ, ինչպես՝ նստազայքաակտիվ, հեռուստաէկրան և այլն:

50-ական թվականներից սկսած, հին հայերենի հեռուստ մակբայով, որ մասնականից հայերենում անգործածական էր, կազմվեցին բազմաթիվ նոր բառեր, որոնք գերազանցապես ռուսերենի, ինչպես նաև այլ լեզուների տեղեկագրիչով կազմված տերմինների ու բառերի թարգմանությունն են. հեռուստատեսություն, հեռուստակենտրոն, հեռուստակայան, հեռուստադիտող, ինֆոստաժուրնալ, հեռուստաէկրան և այլն:

Նվ ահա, թերևս, փոխառյալ մի շարք տերմինների ու բառերի կամ լեզվի դարդացման արտաքին միջոցների ազդեցությամբ է, որ բուն հայերեն հեռուստ բաղադրիչով կազմված բարդություններում ձայնավորով սկսվող հաջորդ բառերից առաջ հոգակապը դուրս չի ընկնում. ինչպես՝ հեռուստաաշտարակ, հեռուստաբեկալիչ, հեռուստաակնարկ և այլն:

Իսկական բարդությունների համար, ընդհանուր առմամբ, թեև առավել բնորոշ են հոգակապով բաղադրությունները, սակայն քիչ թիվ չեն կազմում նաև անհոգակապները:

Հայերենի անհոգակապ բարդություններից են՝ աներծագ, ակնբախ, ակընկալ, արեշող, ամպշող, բանբեր, բացբերան, ժամկետ, խոտհունձ, ծակաչֆ, հավկիթ, ձկնկիթ, ձիթհան, ձնծաղիկ, մատնշունչ, շենշող, ջրվեժ, շրհուր, ջրծաղիկ, ջրկիր, ջրհան, ջրբաժան, սևերես, սևգիր, պարգերես, տաֆլուխ, տունդարձ, տնտես, ֆարհատ, ֆմծիծաղ, ֆարտաշ, ֆաղցեկ, փողկապ, օրհաս և այլն:

Անհոգակապ իսկական բարդությունների հարստացմանը և զարգացմանը նպաստել են. ա) կցական բարդություններից մի քանիսի՝ բառիմաստների փոփոխությամբ իսկական բարդությունների վերածումը և դրանց նմանակությամբ անհոգակապ իսկական բարդությունների կազմումը:

Այսպես՝ բացնակատ, բացբերան, ծուռբերան, նեղսիրտ, նեղմիտ, սևերես, պարդերես, տաֆլուխ, ֆարսիրտ և այլ բարդությունները առաջացել են շարահյուսական կապակցություններից (հմմտ. բաց ձակատ, բաց բերան, նեղ սիրտ, տաք գլուխ և այլն) և սկզբնապես կցական բարդություններ էին: Սակայն բառիմաստի փոփոխությամբ սրանք վերածվել են իսկական բարդությունների, որովհետև արտահայտում են ավելի իմաստ, քան բաղադրիչների կամ բարդությունների համար հիմք հանդիսացող շարահյուսական կապակցության թելադրած իմաստն է, այսինքն արտահայտում են ոչ թե բաց նակատ, բաց բերան, ծուռ բերան, ֆար սիրտ, տաֆ գլուխ իմաստները, այլ բաց նակատ, բաց բերան, ծուռ բերան, ֆար սիրտ, տաֆ գլուխ ունեցող իմաստները: Այսպիսի բարդությունների հիմքով, այնուհետև իսկական բարդություններ կարող են առաջանալ ուղղակի դրանց նմանակությամբ, ինչպես՝ շենշող և այլն:

(շեն շող ունեցող, պայծառ), սուրսայր, սուրբեկոր, շողակն (շողացող ակն ունեցող) և այլն:

Այսպիսով, այս տիպի իսկական բարդությունները ձևով նմանվում են կցականներին: Նմանվում են, անշուշտ, ոչ հնչյունափոխված բաղադրիչ ունեցող կաղապարները, քանի որ կցական բարդությունները անհոդակապ լինելուց բացի, շեն հնչյունափոխվում: Հետևաբար, խոսքը այստեղ անփոփոխ (չհնչյունափոխված) ձևովներ ունեցող անհոդակապ բարդությունների ձևի նույնացման մասին է:

բ) Հայերենի բարբառների և մասամբ խոսակցական լեզվի ազդեցությունը: Ժամանակակից հայերենի շատ անհոդակապ բարդություններ փոխանցվել են բարբառներից. *ինչպես՝* արևկող, արմնփետ, գրբաց, գելխեղ, քրթխմոր, երեխամայր, երեսծեծանք, ծալպակաս, կերկուխ, հավկուր, նրագվառոց, մատնշուռ, շարխափան, փարհալած, փարմաղ, փորկապ և այլն:

Կազմվել և փոխանցվել են նաև հնչյունափոխված բաղադրիչներով բարդություններ, *ինչպես՝* ջրփռի, տնպան, հարսնտես, կարմրցան, ձիթհան և այլն: Սրանց ազդեցությամբ և նմանակությամբ ևս ժամանակակից հայերենում կազմվել են մեծ թվով անհոդակապ բարդություններ. և այսօր դժվար է մշգրտորեն ասել, թե ո՞րն է բարբառներից փոխանցվել և ո՞րը՝ նմանակությամբ կազմվել. *ինչպես՝* խմորհունց, խտհունձ, կալմեջ, կովկիթ, ձեռնհաս, ձեռնպահ, ձկնկիթ, հացթուխ, հավկուր, հավկիթ, համտես, էջկապ (էջ կապող), դոնբաց, դոնփակ, ծամկալ, կրծկալ, ջրհեղեղ, ջրհուր, ջրկիր, ջրհան, շարկամ, փորսող և այլն:

գ) Բառերի աճը: Բառերի աճման հետևանքով (վերջավորությունների կամ ածանցների հավելմամբ) դրանց բարեհնչունության նպատակով հաճախ հոդակապը դուրս է ընկնում, *ինչպես՝* հրակեղ-հրկիզել, պահապան-պահպանություն, թույլատրել-թույլտվություն, բարյացակամ-բարյացկամություն (գործածական է նաև բարյացակամություն ձևը), անբարյացակամ և այլն:

Անհոդակապ են նաև ժամանակակից հայերենի փոխառյալ բաղադրիչ ունեցող կամ նոր տիպի բարդությունների մեծագույն մասը: Սրանք հիմնականում ռուսերենից կամ դրա միջնորդությամբ փոխառված մի շարք բառերով կամ բաղադրիչներով (ֆոտո, ռադիո, հիդրո, կինո, միկրո, տուրբո և այլն) բաղադրված բարդություններ են, որոնց մեծագույն մասը դրանցով կազմված ռուսերեն բարդ բառերի պատճենումներն են. *ինչպես՝* ռադիոընդունիչ, ռադիոբեմադրություն, ռադիոգիր, ռադիոհաղորդում, միկրոջրջան, կինովիպակ, կինոդրամատուրգ, կինոֆենհարկում, կինոփառատոն, ֆոտոթղթակից, ֆոտոցուցահանդես, հիդրոկայան, տուրբոպտուտակ, սպորտխմորհուրդ, սպորտդպրոց, սպորտդահլիճ, սպորտհրապարակ, երկաթբետոն, պիոներպալատ, պիոներկանչ, մեքենատրակտորային և այլն:

Սրանք թեև իրենց ձևով անհոդակապ բաղադրություններ են, սակայն իմաստային յուրահատկությամբ տարբերվում են հայերեն իսկական անհոդակապ բարդություններից, որի հետևանքով էլ դասվում են առանձին կամ նոր տիպի իսկական բարդությունների մեջ:

Կան քիչ թվով կազմություններ էլ, որ գործածական են և՛ հոդակապով, և՛ անհոդակապ ձևով. *ինչպես՝* ջրաղացփար-ջրաղացափար, արևշող-արևաշող,

երևապատել-երեսապատել. շարկամ-շարակամ, սիրտխառնոց-սրաախառնոց և այլն:

Սակայն այսպիսի գուգահեռ ձևերը քիչ են ժամանակակից հայերենում, բանի որ լեզվին խորթ է նույնանիշ ձևերի կուտակումը և դրանցից խուսափելու համար ստեղծվում է բառերի ձևերի տարբերակում, որոնք անհրաժեշտության դեպքում ստանում են նաև իմաստային տարբերակում: Այսպես՝ փառհատ նշանակում է փառ հատող, իսկ փառհատ՝ փառով հատված, որ քիչ է պործածական. փառտաշ նշանակում է փառ տաշող, իսկ փառտաշ՝ փառով տաշված. հրծիգ նշանակում է հուր ձգող, այսինքն «կռիվ, պատերազմ հրահրող», իսկ հրածիգ՝ «կրակող» և այլն:

Եվ լեթ նույնիսկ կազմվում են միևնույն բաղադրիչներով կազմված հոդակապով և անհողակապ բարդությունների զուգահեռ ձևեր, ապա դրանցից մեկը դործածությունից դուրս է բնկնում անբարեհնչունության հետևանքով. Հետևաբար, իրավունք է ստանում գործածվելու և տարածվելու դրանցից մեկը, այսպես՝ ջրկիր և ոչ թե ջրակիր, հացթուխ և ոչ թե հացաթուխ, դոնբաց և ոչ թե դոնաբաց և այլն:

Այսպիսով, քանի որ անցյալում ստեղծվել են բարդության անհողակապ կաղապարներ, արդեն դրանց որևէ եզրի նմանակությամբ ստեղծվում են նաև նոր բարդություններ: Անհողակապ բարդությունների նմանակությամբ նոր բարդություններ են կազմվում հատկապես հնչյունափոխված առաջին եզրի բաղադրիչներով. այսպես՝ ջուր արմատի ջր տարբերակով կազմվել են ջրծաղիկ, ջրհուր, ջրկիր, ջրմուղ, ջրհեղեղ, ջրհավաք, ջրվեժ, ջրբաժան և այլն: Սակայն ունենք ջր բաղադրիչով նաև հողակապով բարդություններ. ինչպես՝ ջրասույց, ջրատար, ջրահեղձ, ջրատուրբին, ջրամոտորային, ջրագնդորդ, ջրապտկորդ և այլն:

Նկատելի է, որ սրանցից վերջինները նորաբանություններ են: Մինչդեռ թվում էր, թե հայերենը պետք է զարգացներ ջր արմատով բաղադրված բարդությունների անհողակապ ձևերը. քանի որ սրանով առավել շատ բարդություններ էին կազմվել, սակայն վերջին տասնամյակներում ակտիվացավ և տարածվեց հիշյալ ձևույթի ա հողակապով ձևը (ջրա): Ջրահեղձ, ջրածին, ջրասույց բառերի կողքին կազմվեցին ջրատար, ջրամոտորային, ջրատուրբին, ջրագնդորդ, ջրացատկորդ նորաբանությունները:

Նույնը և հուր ձևույթի հր և հրա տարբերակներով ունենինք հրշեջ, հրծիգ, հրկիգել, հրացուլք, հրաբուխ, հրավառ, հրակեղ և այլ բառերը, սովետական շրջանում կազմվեցին հրահալոց և հրակայուն նորաբանությունները:

Այս չի նշանակում, իհարկե, թե վերոհիշյալ ձևույթների անհողակապ տարբերակներով այլևս նոր բառեր չեն կազմվում. այսպես՝ ջր բաղադրիչով են վերջերս կազմվեց նոր բառ՝ ջրհավաք (ջուր հավաքող): Վերախմաստավորվեց և գործածության մեջ մտավ ջրհան բառը (հմմտ. ջրհան կայան) և այլն:

Թե ինչու միևնույն ձևույթով լեզուն ստեղծում է և՛ հողակապով, և՛ անհողակապ կաղապարներ, դժվար է ասել, քանի որ լեզվի զարգացման յուրահատկություններից բխող ոչ բոլոր երևույթներն են հեշտ բացատրելի:

Այսպես՝ միևնույն ձևույթով կազմված բարդություններում մի դեպքում կարող է կենսունակ լինել նրա հողակապով ձևը, իսկ այլ դեպքում, մեկ ուրիշ ձևույթով բաղադրված բարդություններում՝ անհողակապ ձևը: Այնպես որ, լեթ ընդհանրապես քանակային տեսակետից գերակշռում են իսկական բար-

դուժյան հողակապով կաղապարները, ապա որոշ բաղադրիչներով կազմված բարդութիւնների համար կարող է լինել հակառակը:

Անհողակապ բարդութիւնները ևս հողակապով բարդութիւնների նման ունենում են իրենց կազմութեան կամ բաղադրութեան կաղապարները. միսնում են դոյականները գոյականների հետ (գոյական + դոյական), ածականները գոյականների հետ (ածական + գոյական), անունները բայարմատների կամ բայահիմքերի հետ (անուն + բայարմատ կամ բայահիմք) և այլն: Ինչ խոսք, որ անհողակապ կաղապարների տեսակներն ավելի քիչ են և շուրջ հողակապով կաղապարների բազմազանութիւնը. բացի այս, կաղապարների մեջ ընգրկված բարդութիւններն էլ թվով քիչ են:

Անհողակապ իսկական բարդութիւններն ունենում են կազմութեան միայն հետևյալ կաղապարները:

ա) Գոյական + գոյական՝ աներծագ, արթիկտսֆ, արեկոդ, արեմուտֆ, ամպշող, երեխամայր, թելպանիր, խաշֆար, ժամկետ, հավկիթ, ձնծաղիկ, ձկնկիթ, ջրհեղեղ, ջրհոր, ջրծաղիկ, տուֆֆար և այլն:

բ) Գոյական + ածական՝ արեշատ, բերանքաց, դոնքաց, դոնվակ, ծալպակաս և այլն:

գ) Ածական + գոյական՝ անուշլեզու, բացբերան, բացնակաս, բացսիրտ, պաղսիրտ, պարգեբես, սևսիրտ, սևերես, սուրսայր, սուրբեկուր, սպիտակեբես, տաֆգուլի, ֆարսիրտ, ֆարհանֆ և այլն:

ե) Անուն + բայարմատ կամ բայահիմք՝ ակնբախ, ակնհայտ, ակնդետ, ակնթարթ, առաջնեկ, բանբեր, երեսպաշտ, ետդարծ, էջկապ, թերխուրով, լրտես, խմորհունց, խոտհունծ, խոտհարֆ, ծամկալ, կովկիթ, հացթուխ, համտես, հրշեջ, հրծիգ, ձիթհան, ձեռնպահ, ձեռնհաս, ձեռնտու, մթնշաղ, նորեկ, ջրամուղ, ջրկիր, ջրհան, ջրբաժան, շարկամ, տնտես, տունդարծ, տնպահ, փլավֆամ, ֆարհատ, ֆաղցեղ, փոքսող, օրհաս և այլն:

Այսպիսի բաղադրութիւնների մեջ բայարմատը հաճախ ստանում է որևէ վերջածանց. ինչպես՝ ականջմտուկ, դոնքացեֆ, երեսսրբիչ, երեսծեծանֆ, խաշմերուկ, հաշկերույթ, հացկերույթ, սուտմեռուկ, պանմոցի, տնօրհնեֆ, փլավֆամիչ, փայտփորիկ և այլն:

Կան նաև քիչ թվով անուններով և բայերով կազմված անհողակապ բարդութիւններ. ինչպես՝ երկրպագել, երեսպատել, երկիգել և այլն:

Ինչպես նկատելի է, անուն + բայարմատ կամ բայահիմք անհողակապ կաղապարով համեմատաբար ավելի շատ բառեր են կազմվել, քան նախորդ կաղապարներով (գոյական + գոյական, ածական + գոյական, գոյական + ածական), սակայն բոլոր դեպքերում, այս կաղապարը ևս աղքատ է հողակապով բարդութիւնների տվյալ կաղապարից. այստեղ գրեթե բացակայում են թվական + բայարմատ (բացի առաջնեկից), դերանուն + բայարմատ և մակբայ + բայարմատ միացութիւնները: Իսկ գոյական գերադաս անդամով կազմված անհողակապ կաղապարներից բարդութիւններ չեն կազմվում բայարմատ + գոյական, մակբայ + գոյական, կապ + գոյական կաղապարներով: Անհողակապ բարդութիւններ չեն կազմվում նմանապես ածական + ածական, բայարմատ + ածական և այլ կաղապարներով:

Այնուհանդերձ, անհողակապ բարդութիւնները կենսունակ են ժամանակակից հայերենում, կազմում են մեծ թվով նոր բարդ բառեր և համալրում ու հարստացնում են ժամանակակից հայերենի բառապաշարը:

СОБСТВЕННО-СЛОЖНЫЕ СЛОВА С СОЕДИНИТЕЛЬНЫМ
ГЛАСНЫМ И БЕЗ НЕГО

С. А. ЭЛОЯН

Резюме

Соединительным гласным в армянском языке является в основном ш (ср. *ախնարով մեծամիտ* и т. д.). Известно, что в ряде собственно-сложных слов конечный гласный ր I компонента, соединяясь с соединительным гласным ш, переходит в Է, согласно действующей в армянском языке фонетической закономерности $ր + ш > Է > Է$ (ср. *դինարուն, աղծիր* и т. д.). Итак, в армянском языке существует 2 соединительных гласных ш и Է:

В современном армянском языке наблюдаются некоторые случаи нарушения нормы употребления гласных ш и Է. Так, в некоторых собственно-сложных словах вместо соединительного гласного ш употребляется Է, например: *ծաղկապակ, ծաղկափունջ, հաշվեկշիռ, բաժնետոմս* и т. д.), то же в случаях *ալցետոմս, արժեթուղթ* и т. д. вместо *ծաղկապակ, ծաղկափունջ, հաշվեկշիռ* и т. д. Наблюдается и обратное явление: вместо соединительного гласного Է употребляется ш, например, *հաշվապատ*. В последнем случае было бы закономерным употребление Է, *հաշվեպատ*, на основе вышеприведенной закономерности. Эти явления связаны с характером таких лингвистических факторов, как заимная ассимиляция, гармония, чередование звуков. Соединительный гласный отсутствует в тех собственно-сложных словах, в которых следующий компонент начинается с гласного, например: *արագընթաց, դարձկեր, ծառուղի* и т. д.

Для современного армянского языка характерны также собственно-сложные слова без соединительного гласного, например: *ժամկետ, ձեռքերով, ճաշերով, փողպատ* и т. д.